

4679



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«23» 04 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 049 - 24

Նախաձեռնողը՝

«ՌԱՊՍ» ՍՊԸ

Արարատի մարզ, Հովրաշեն 0725

Գործունեությունը՝

Արարատի մարզի Մասիս համայնքի Հովրաշատ  
բնակավայրի վարչական տարածքում ձկնաբուծարանի  
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ

Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի  
պարտականությունները կատարող՝



Լերիքնագ Մկրտչյան

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 049 - 24  
« 23 » 04 2024թ.

**Արարատի մարզի Մասիս համայնքի Հովտաշատ բնակավայրի վարչական տարածքում գործող ձկնաբուծարանի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	«Ռապս» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք, Հովտաշատ բնակավայր

**Ներածական մաս.** Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք, ՀՕ-150) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի «ա» ենթակետի՝ Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Հովտաշատ բնակավայրում ձկնաբուծական տնտեսությունը՝ տարեկան 100 տոննա և ավելի արտադրողականությամբ, եթե տնտեսության ջրօգտագործումը չի գերազանցում 400 լիտր/վայրկյանը, դասակարգվում է Բ կատեգորիայի:

**Նկարագրական մաս.** Ձկնաբուծական տնտեսությունը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Հովտաշատ բնակավայրի վարչական տարածքի սահմաններում: Հարակից բնակավայրերից գտնվում է 0.9-2.65 կմ հեռավորության վրա:

«ՌԱՊՍ» ՍՊԸ-ի կողմից Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Հովտաշատ վարչական շրջանի 12-րդ փողոցի 47 հասցեում ներկայումս իրականացվում է ձկնաբուծական գործունեություն՝ ՍՊԸ-ին սեփականության իրավունքով տրամադրված ընդհանուր՝ 1.35 հա տարածքում /ջրային, գործառնական և նպատակային նշանակության հողամասերում/: Ընկերությունը զբաղվում է ծիածանափայլ իշխանի բուծմամբ և ավելացնելով արտադրողականությունը՝ ներկայումս այն հասցրել է 112 տ/տարի՝ կախված պահանջարկից: Անհրաժեշտ քանակի բեղնավորված ձկնկիթը գնվում և տեղափոխվում է դրանց աճեցման լճակ, ապա հաջորդական ցիկլերով աճեցվում մինչև ապրանքային ձկան տեսակ: Անհրաժեշտ քանակի 30-50 գրամանոց մանրածուկը գնվում է: Մանրածկից մինչև ապրանքային ձկան աճեցման ցիկլը տևում է մոտ 1 տարի: Այս ձկնատեսակի մեկ առանձնյակը մինչև 1 կգ աճեցնելու համար պահանջվում է 1.8 կգ կեր: Համաձայն Հայտում ներկայացված տեղեկատվության՝ Ընկերության կողմից օգտագործվող կերերի որակական ցուցանիշները համապատասխանում են բուծման համար նախատեսված կերերի համար սահմանված տեխնիկական պայմաններին և պահանջներին:

Գործունեության ենթակա տարածքն արդեն իսկ կառուցապատված է, նոր կառուցապատում և շինարարական աշխատանքներ չեն նախատեսվում:

Ձկնաբուծական տնտեսության ենթակառուցվածքները զբաղեցնում են մոտ 1.35 հա: Արտադրական տարածքում առկա են՝ 1156,56 քմ, 602,1 քմ և 3092,32 քմ



մակերեսներով ձկնաճեցման, 111,36 քմ փոքր ձկների, 702 քմ հողաթմբե մակերեսներով լճակներ, տնտեսական շինություն, ենթակայան, անասնաշենք (չգործող), շին. II հարկ, մանրածկան արտադրամաս, N1, N2 և N3 ջրավազաններ, 2 հատ արտադրամասեր և այլն: Ձկնաբուծական լճակներում ապահովված է բնական լուսավորվածությունը: Ջրավազանների վրա տեղադրված աէրատորների միջոցով ապահովում է ջրի շրջապտույտը՝ անհրաժեշտ թթվածնով հագեցնելու համար և ստեղծում են բարենպաստ միջավայր կենդանիների բուծման համար: Կերակրումը կատարվում է սահմանված նորմերին համապատասխան, կերի ամբողջ ծավալը յուրացվում է ձկան կողմից և կերի մնացորդի նստվածքներ չեն առաջանում: Կերի դոզան և կերակրման միջակայքերը վերահսկվում են հերթապահ օպերատորի կողմից:

Ընկերության ջրօգտագործումը ներկայումս 3 գործող խորքային հորից՝ առավելագույնը 5045.97հազ.մ<sup>3</sup>/տարի, 13824.6մ<sup>3</sup>/օր, 160.0լ/վ ծավալով իրականացվում է ՇՄՆ կողմից 27.03.2023թ.-ի տրված թիվ 0064-23 ջրօգտագործման թույլտվության պայմաններին համապատասխան: Ձկնաբուծական լճակներից հեռացվող արտահոսքն ավազաններում շրջանառվելուց հետո դրենաժային համակարգով (4541.38հազ.մ<sup>3</sup>/տարի, 12442.2մ<sup>3</sup>/օր, 144.0լ/վ ծավալով) հեռացվում է Հրազդան գետ՝ ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պայմաններին համապատասխան՝ ապահովելով կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի քանակները:

Ընկերության կողմից ջրաքանակի ավելացում չի նախատեսվում, ապահովվելու է ջրօգտագործման և ձկնարտադրության համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված տարեկան ծավալների չափաքանակները, ինչը սահմանված է ջրօգտագործման թույլտվությամբ: Ձեռնարկության ջրառի կոորդինատական կետերն են՝ X = 44°21' 25.1" Y=40°05' 41.1". X = 44°21' 30.3" Y=40°05' 39.6", X = 44°21' 29.4" Y=40°05' 37.1, իսկ ջրահեռացման կետերը՝ X = 44°21' 33.52" Y=40°05' 36.15". X = 44°21' 26.71" Y=40°05' 38.33:

Ընկերությունն ունի ՇՄ նախարարության կողմից համաձայնեցված ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմաներ: Կեղտաջրերի մաքրում չի կատարվում: Ջրօգտագործման թույլտվությամբ և 27.03.2023թ.-ի կեղտաջրերով ջրային ռեսուրսներ թափվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի N°34 նորմերով սահմանվել են կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի նորմերը: Ընկերությունը հանդիսանում է «ՀԷՑ» բաժանորդ, էլեկտրամատակարարումը կատարվում է պայմանագրային հիմունքներով: Տարածքում գազաֆիկացում չի նախատեսվում, արտադրական տարածքների ջեռուցումը իրականացվում է էլեկտրական սարքերով:

Տվյալ գործունեության փորձաքննության գործընթացի շրջանակներում Ընկերության կողմից ձկնաբուծարանի ընդլայնում չի նախատեսվում և չի ներառում հողային աշխատանքների իրականացում և հողային ռեսուրսների վրա ազդեցություն: Բուն ձկնաբուծարանի տարածքն ամբողջությամբ բետոնապատ է, առանձին հատվածներ՝ ասֆալտապատ: Բաց հողային տարածքներ ձկնաբուծարանի սահմաններում չկան:

Ձկնարդյունաբերական կազմակերպություններում առաջացող թափոնների կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

Շահագործման փուլում ձկնաբուծական ջրավազաններում չյուրացված կերը և ձկների չվերամշակված արտաթորանքները հեռացվելով շրջակա միջավայր կարող են սննդարար տարրերի լրացուցիչ աղբյուր հանդիսանալ: Գոյացող թափոնը /կերի ավելցուկից և ձկան արտաթորանքների պինդ զանգվածից գոյացող նստվածք/ համապատասխան մշակումից հետո կարող է օգտագործվել որպես պարարտանյութ:



Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արտադրված ձկան ամեն տոննայի դիմաց շրջակա միջավայր արտանետվող ազոտի և ֆոսֆորի քանակը կախված է կերի բաղադրությունից, կերակրման ռեժիմից, կերի քանակից, կերի յուրացման չափից, ջրի ջերմաստիճանից: Դրանց մեղմացնող միջոցառումները ներառում են այնպիսի կերաբաշխման համակարգերի նախատեսում, որոնց ներդրմամբ հնարավոր կլինի առավելագույնի հասցնել կերային գործակիցը և նվազագույնի հասցնել թափոնների գոյացումը: Ձկան կերի բաղադրության նորմայավորումը կնպաստի նաև կերի յուրացման աստիճանի բարձրացմանը: Կիրառվում է ԵՄ տարածքում (Իտալիա) արտադրվող SKRETTING էքստրուդացված կերը: Կերի բաղադրությունն է՝ պրոտեին 45.22%, յուղ 12.06%, կալցիում 1.22%, ֆոսֆոր 0.8%, ցելյուլոզա 3.97%, խոնավություն 9.2%: Կերի հատիկների չափը՝ մոտ 3մմ: Ձկների կերակրման նորմը կապված է ջրավազաններում ջրի փաստացի ջերմաստիճանից և ներկայացված է աղյուսակում (արտահայտված է ձկան քաշի %-ով):

Ձկնային տնտեսությունում առաջացող թափոնատեսակներն են.

- կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), տարեկան մոտ 0.9տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի մոտակա աղբավայր,

- սննդամթերքի արտադրության հոսքաջրերի նստվածք՝ մոտավոր 40 կգ/տարեկան քանակով:

Համաձայն Հայտի՝ տնտեսությունում ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ներդնել ջրի փակ շրջանառու համակարգ և ջրառի բոլոր կետերում տեղադրել ուլտրաձայնային ծախսաչափեր, ինչի բավարար լուծումները Հայտում ներկայացված չեն:

Լճակներում ջուրը շրջանառվելուց հետո հեռացվում է Հրազդան գետ, որտեղ խառնման արդյունքում տեղի է ունենում ջրում պարունակվող օրգանական միացությունների նոսրացում:

Ձկնաբուծարանի շահագործման ընթացքում կարևորվում են շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված գործողությունների իրականացումը, որոնցից կարևորվում են՝ կերաբաշխման համակարգի վերահսկումը և կերի բաղադրության նորմայավորումը, որոնք միտված են առավելագույնի հասցնելու կերային գործակիցը, իսկ նվազագույնի՝ թափոնների գոյացումը:

Շահագործման փուլի համար տնտեսությունում նախատեսված մշտադիտարկումների գործողությունները ներառում են՝ ջրի լաբորոտոր ուսումնասիրությունների իրականացում լճակներում, ջրառների և ջրահեռացման կետերում /Հրազդան գետ թափման կետում և թափման կետից 100 մ ներքև/ եռամսյակը մեկ, որոնց իրականացման համար նախատեսված ծախսերը գնահատվել են 729.5 հազ. ՀՀ դրամ:

**Փորձաքննական հիմնավորումներ.** Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Հովտաշատ բնակավայրի վարչական տարածքում գործող ձկնաբուծարանի փորձաքննության գործընթացն իրականացվել է Օրենքի պահանջների համապատասխան:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Արարատի մարզպետարանը, Մասիս խոշորացված



համայնքը, Հովտաշատ բնակավայրը, որոնց կողմից ներկայացված կարծիքները հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

«Օրենսդրությամբ սահմանված կարգով, գնահատման և փորձաքննության փուլերում Հայտի վերաբերյալ Մասիս համայնքի Հովտաշատ բնակավայրում իրականացվել է երկու հանրային քննարկում:

Հաշվի առնելով Փորձաքննության գործընթացում օրենսդրական փոփոխությունները՝ կապված Ջրային օրենսգրքի 37.3 հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետը և 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2305-Ն Կառավարության որոշման /այսուհետ՝ Որոշում/ պահանջների հետ, Հայտը վերադարձվել է ձեռնարկողին լրամշակման: Ընկերության կողմից լրամշակված Հայտում չեն ներկայացվել բավարար տեխնիկատեխնոլոգիական լուծումներ շահագործման ընթացքում ջրային ռեսուրսները խնայողաբար օգտագործելու և պահպանելու համար:

Հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարանների աշխատանքները պարունակում են ստորերկրյա ջրային ռեսուրսների ջրային հաշվեկշռի անհավասարակշռության վերականգնման և պահպանման ռիսկեր: Դրանից ելնելով անհրաժեշտ է ձկնաբուծարանում գործունեությունն իրականացնել փակ շրջանառու համակարգով, ինչի ներդրման ժամկետ է սահմանվել 2024 թվականի հունվարի 1-ը և համաձայն Որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի մարտի 1-ը ջրօգտագործողը ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին պետք է ներկայացնի փակ շրջանառու համակարգի տեղադրման և շահագործման վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես, ջրի մաքրման, թթվածնով հարստացման և կրկնակի օգտագործման համակարգի տեղադրված լինելու վերաբերյալ, ինչը ներկայացվել է թերի:

Համաձայն տեղեկատվության՝ ներկայացված ձկնաբուծական տնտեսությունում շահագործվող 3 խորքային հորերից միայն մեկի վրա է տեղադրված ուլտրաձայնային ծախսաչափ, այնինչ Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 2207-Ն որոշմամբ պարտադիր պահանջ է մինչև 2024 թվականի հունվարի 1-ը ջրառի բոլոր կետերում ուլտրաձայնային ծախսաչափերի տեղադրումը:

Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Հովտաշատ բնակավայրի վարչական շրջանի 12-րդ փողոց 47 հասցեում գործող ձկնաբուծարանի շահագործման աշխատանքների Հայտի վերաբերյալ փորձաքննական եզրակացության համար հիմք են հանդիսացել Ջրային օրենսգրքի 37.3 հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով ամրագրված և 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2305-Ն Կառավարության որոշմամբ սահմանված պահանջների ոչ բավարար կատարումը:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերը նշված պատճառաբանական եզրահանգումները՝ «ՌԱՊՍ» կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Հովտաշատ վարչական շրջանի 12-րդ փողոց 47 հասցեում գործող ձկնաբուծարանի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,  
առաջատար մասնագետ՝



Աստղիկ Վարդանյան

